ԱՇԽԱՐՀԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՔԻԱԹՆԵՐ

# ԵՎՐՈՊԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՔԻԱԹՆԵՐ

Հատոր Գ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ հրատարակչություն
EDIT PRINT publishing house

# ՏԵՐՏԵՐՆ ՈՒ ԷՇԸ



Լինում է չի լինում մի տերտեր: Այդ տերտերը մի բանջարանոց է ունենում, իսկ բանջարանոցում՝ մի ջրհոր: Էշին նա կապում է ջրհորից և ստիպում է գիշեր-ցերեկ պտտել ճախարակն ու ջուր քաշել: Իսկ որպեսզի էշը չփորձեր հանգստանալ, տերտերը ճախարակից բոժոժներ է կախում: Երբ էշը պտտեցնում էր ճախարակը, բոժոժները զրնգզրնգում էին: Հենց որ էշը կանգնում էր, բոժոժների ձայնը կտրվում էր: Այդ ժամանակ տերտերը գլուխը պատուհանից հանում էր ու գոռում էշի վրա և նորից ստիպում նրան աշխատել:

Մի անգամ տերտերի տան մոտով անցնում էին երեք խորամանկ երիտասարդներ: Նրանք շատ քաղցած էին, բայց գրպաններում ոչ մի գրոշ չկար: Նրանք որոշում են գողանալ տերտերի էշը:

Բայց ինչպե՞ս անեին, որ աննկատելի մնային, տերտերը չիմանար, իսկ բոժոժներն էլ անընդհատ զնգզնգային:

Մտածում են, շատ են մտածում և այսպիսի վճիռ են կայացնում. մեկը կմնա ջրհորի մոտ և կպտտեցնի ճախարակն այնքան ժամանակ, մինչև նրա ընկերները հեռանան:



Այդպես էլ անում են:

Նա, ով մնացել էր ջրհորի մոտ, ամբողջ գիշեր պտտեցնում է ճախարակն ու զնգզնգացնում բոժոժները: Վերջապես նա հոգնում է ու կանգ առնում:

Բոժոժների ձայնը կտրվում է, ու տերտերն անմիջապես գլուխը հանում է պատուհանից: Նա էշի տեղը տեսնում է ինչ-որ մարդու, մի մեծ դանակ է ճանկում ու վազում դեպի ջրհորը:

Խեղճ երիտասարդը շատ է վախենում, բայց նրա պատասխանը նախօրոք արդեն պատրաստ էր.

- Մի՛ զարմանա, թանկագին տեր,- ասում է նա տերտերին,- ես քո էշն եմ: Քանի տարի սրանից առաջ չար կախարդն ինձ էշ դարձրեց, ու ես պետք է իմ ամբողջ կյանքում պատժեցնեի ջրհորի ճախարակը, բայց իմ աղոթքներն իզուր չանցան, Աստված ինձ նորից մարդ դարձրեց: Ազատ արձակիր ինձ, իմ բարի՛ տեր:

Տերտերը խիստ զարմանում է, ազատ է արձակում երիտասարդին, որ գնա, ուր աչքը կտրի և պատվիրում է ամեն օր աղոթել Աստծուն, որպեսզի նորից էշ չդառնա:

Հաջորդ օրը տերտերը գնում է նոր էշ գնելու:

Այնտեղ նա նկատում է, որ ծախելու են բերել իր սեփական էշը: Տերտերը վախենում է, մի կողմ է փախչում ու բացականչում.

- Էլ հերի՛ք եղավ, հիմա ինձ էլ չես խաբի: Թող քեզ առնի նա, ով չի ճանաչում:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Անգլիական հեքիաթ**

Կարմրատամ Ախնը ........ 3

**Բելգիական հեքիաթ**

Սպիտակ ձնծաղիկը ........ 13

**Բուլղարական հեքիաթ**

Անգին քարը ........ 20

**Հունգարական հեքիաթներ**

Կատիցա Տերդսելի ........ 27

Երկու միսեռաչափ եզներ ........ 34

**Գերմանական հեքիաթ**

Հիմար Պետերը ........ 39

**Հունական հեքիաթներ**

Թռչուններ ամենղնագործող աղջիկը ........ 52

Անվերջանալի հեքիաթ ........ 62

**Դանիական հեքիաթ**

Ճշմարտախոս Սվենը ........ 68

**Իռլանդական հեքիաթ**

Կոնալը, Դոնալը և Տեգը ........ 78

**Իսպանական հեքիաթներ**

Տերտերն ու էշը ........ 86

Կատակասեր Պեդրոն ........ 89